ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջն առ այն, որ ***փաստաբանների պալատի նախագահն իր լիազորություններն իրականացնելու համար կարող է նշանակել տեղակալներ՝ փաստաբանների կազմից,***

նկատի ունենալով այն, որ փաստաբանների կողմից սահմանված ժամկետում անդամավճար չմուծելու և սահմանված կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով, ինչպես նաև որոշ դեպքերում այլ հիմքերով և առիթներով (այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցի հրապարակման առիթով) կարգապահական վարույթ հարուցելու (հարուցելը մերժելու) լիազորությունների իրականացումը նպատակահարմար է վերապահել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) նախագահի առաջին տեղակալի իրավասությանը,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. ***Պալատի նախագահի առաջին տեղակալ Էմիլ Ամիրխանյանին վերապահել՝***
   - ***փաստաբանի կողմից սահմանված ժամկետում անդամավճար չմուծելու հիմքով կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը.***
   - ***փաստաբանի կողմից սահմանված կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը.***
   - ***Պալատի նախագահի կողմից իրեն մակագրված դիմումի (բողոքի) և/կամ զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա կարգապահական վարույթ հարուցելու (հարուցելը մերժելու) լիազորությունը:***

2. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 21-ից (ներառյալ 21-ին) և գործում է մինչև 2021 թվականի հոկտեմբերի 4-ը ներառյալ:

3. Ուժը կորցրած ճանաչել Պալատի նախագահի 04.10.2017թ. թիվ 313-Ա որոշումը:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

21 նոյեմբերի 2019թ.
թիվ 479-Ա
ք. Երևան